ՍԻՕՆ

ԱՄՍԱԳԻՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ
ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ
ՀԱՏՈՐ ՄԻԱՄԱՆԱՑ

ՅԵՐՈՒՍԱՂԷՄ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ
1867

ԱՆՈՒԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱՑ

ԱՄՆ. Տ. Տ. ԵՍԱՑԻ Սբ. Պատրիարք (3 օրի.)։
Եր. Խոհակ Ալքեպիսկոպոս (2 օրի.)։
» Կարապետ Ալքեպիսկոպոս։
» Յակոբ Սբ. Եպիսկոպոս (2 օրի)։

ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ

Ալժ. Յակոբ Ծ. վարդապետ։
Աղաբեկեան մահտեսի Յակոբ աղա։
Գրիգորեան Սարգիս էֆենտի
Գ. Եսայեան Ազէքսանդր աղա։
Ջաքիէան Կարապետ աղա։
Խաչատուր մահտեսի Յակոբ աղա։
» Ալիճա Աղգ ափրիական Ընկերութիւն։
Հայտճեան Պէրան աղա։
Համամճա Հիմնէի Գրիգորեան։
Ճէվահիրճեան Գասունիկ աղա։
Նիկողայոսեան Յարութիւն էֆենտի.
Պօղոս աղա Բեյաթօֆ։
Ղէղլճեան Գարրիէլ աղա։
Սէֆէրեան մահտեսի Փօղոս էֆենտի։
Տէր Գաւորգեան Ղազարոս աղա։

ԱՆՏԻՈՔ

Գէր. առաջնորդ Յովհաննէս վարդապետ Բէքմէճեան։
Եսայեան Սարգիս աղա Կապանմահճեցի։
Յակոբ աղա անդամ կառավարութեան ժողովից։
Քէօսէեան Սարգիս աղա Ադապկէրցի։

ԱՏԱԲԱԶԱՐ

Նշլճեան Մինասեան աղա։
Թոպալեան մահտեսի Խաչատուր աղա։
Կօբլիքեան մահտեսի Սահակ աղա։

ԱՓԻՕՆ ԳՈՄԱՏԻՍԱՐ

Վարպետեան Հրիպսիմ աղա։

ԲԵՐԻԱ

Գէր. Առաջնորդ Մկրտիչ վարդապետ Տիպսիճեան։
Ազնաւեան Մկրտիչ աղա։
Բրուսեան մահտեսի Մանասս աղա Ադապկէրցի։
Գալշճեան Յովսէփեան Գրիգոր աղա։
Գաբրաճեանց Օհան աղա Ջամճեցի։
Նիկոեանց Եղբայրք Սեդրաք աղա Ադապկէրցի։
Թ. Բեֆենտճեան Մկրտիչ աղա Ջամճեցի։
Զարաճիլճեան Մինաս աղա Ադապկէրցի։
Ծանտեսի Փօղոս աղա Թէրզի պաշճեան։
Շահվէքիրեան մահտեսի Ասատուր աղա։
Պաղտճեթլեան մահտեսի Կարապետ աղա Ադապկէրցի։
Սահիանեան Պաղտոս էֆենտի։
Տէր Գրիգորեան մահտեսի Կարապետ աղա։
Տէր Խաչատուրեան մահտեսի Սարգիս աղա։
Տէր Կարապետեան Սարգիս աղա Ջամճեցի։
Տէր Մարգարեան մահտեսի Նիկողոս աղա։
Տէր Յակորեան Վարդան աղա Ջամճեցի։
Տէր Սահակեան մահտեսի Ճօհաննէս աղա։
Քիւրքճիանօֆ Յովհաննէս էֆենտի։

ԴԱՄԱՍԿՈՍ

Ալժ. Բասիճաքաս վարդապետ տեռտէչ։
Խաչիքեանեան մահտ. Յարութիւն աղա Սաղմիեցի։

ԵԳԻՊՏՈՍ

Ալժ. Սարգիս վարդապետ։
» Կարապետ վարդապետ։
Գալֆայեան մահտեսի Ղեմքուր օրիորդ Պօղոսեցի։
Ալաղարճ Սմբատ աղա Զմիւռնացի։
Պապազեան Պօղոս էֆենտի։
Կարապետեան Սարգիս եւ Յակոբ աղայք։
Յակոբեան Մուհրան աղա Ճէվահիրճի։
Դաւիթ խոճիկեան վարժապետ։
Ռուճիկեան Գէորգ Պէյ։
Սահիանեան Մինասեան աղա Ըզմիրցի։

ԵՐԶՆԿԱՅ

Վիեննայի Ազգային Ճեմարանի Գ. դասի աղա։

ԵՐՈՒՍԱՂԷՄ

Վեհափառ Նոսրէթ Փոշոյ կառավարիչ քաղաքիս։
Լիվա փաշայ։
Կրթական Ժողովոյ Վարդապետ։
» Պետրոս վարդապետ։
» Յովհաննէս վարդապետ։
» Նշանէ վարդապետ։
» Խաչատուր վարդապետ։
» Կիրակոս վարդապետ։
» Ղեւոնդ վարդապետ։
» Տիմոթէոս վարդապետ
» Երեմիա վարդապետ։
» Առաւածատուր վարդապետ,
» Սրապիոն վարդապետ։
» Փիլիպպոս վարդապետ։
» Իգնատիոս վարդապետ։
» Խորէն վարդապետ։
» Մկրտիչ վարդապետ։
» Մեսրոպ վարդապետ։
» Թադէոս վարդապետ։
» Բարսղեղիմէոս վարդապետ։
Տէր Յակոբ քահանայ Երզնկացի։
Սարիսապ Բաղտէզ Բաղիշեցի։
» Յարութիւն Լ. Կէօմիւլճէեան Գալաթացի։
Տիրացու Խաչատուր Բէհզատեցի։
Ամերիկայի Հիւպատոս. Mr. Victor Beauboucher, Consul d'Amérique.
Ընդհանուր Հիւպ. Mr. N. Moore, Consul d'Angleterre.
Գաղղիոյ ընդհանուր Հիւպ. Mr. E. de Barère, Consul Général de France.
Գաղղիոյ Հիւպատոսարանի քարտուղար. Mr. F. Rougon, Chancelier du Consulat de France.
Խաչատուրեան Յակոբ աղա։
Մուհճաֆեան Կարապետ աղա։
Մուրատեան Բաղրատ Յակոբ աղա (2 օրի.)։
Ռուսիոյ Հիւպ. Mr. André Kartzoff, Consul de Russie.
Սարիպէշ Պօղոսեան Յակոբսա աղա։
Ս. Լուսաւորչեան Վարդան աղա։
Սպանիոյ Հիւպ. Mr. Louis Dodici, Consul d'Espagne.

ԵԳԵՍԻԱ

Գալֆայեան մահտեսի Գրիգոր աղա Ակնցի։
Լուսաւորչական ընկերութիւն։
Ընտանեաց. ընկեր. գիշերապահ ուսանողք։
Պատմաճեան մահտեսի Գաղտաղար աղա։

ԵՐԵՒԱՆ

Քէրիմով մահտեսի Եղիազար աղա։

ԵՒԴՈԿԻԱ

Առաջնորդ Եւդոկիոյ արժ. Յակոբ վարդապետ։
Ջամճերլիեանեան Գրիգոր աղա։

ԶՄԻՒՌՆԻԱ

Տէր Յակոբ քահանայ Գալաթացեան։
Ազնաճեան Մուհրան աղա։
Գուշճուպաշեան Յովհաննէս աղա։
Եսայեան մահտեսի Յակոբ աղա։
Չօրպաճեան Գրիգոր աղա։
Էլմասեան Գէորգ աղա։
Համբարձումեան մահտեսի Փ. Գալուստ պատուիր



ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ
ԹԻՒ 5·

ԱԻՕՏ

ՄԱՅԻՍ 31·
1867·

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԸՕԳՈՒՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

ՈՒԴԵՒՈՐՈՒԹԻՒՆ Տ· Տ· ԳԵՈՐԳԱՅ ՎԵՀԱՓԱՒՈՒ ԵՒ
ՍԲՌԱԶՆԱՍՈՒՐԲ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ Ի Կ· ՊՕԼՍՈՅ Ի ՏՓԽԻՍ (1)

Ն.ՈՐԻՆ Վ.ԵՀԱՓԱՌՈՒԹԻՒՆԸ մարտի 28ին, ժամ՝ 5 էն Օրթագիւղի Մաքսատեղւոյն վսեմաշուք Սիմոնիկ էֆէնտիին ամարանոցին մէջ ապրելէն ետեւ, վերոյիշեալ պատճառաւ՝ եկեղեցական հանդիսիս իմաս ի ծովեզերքը. ուր բոլոր խոռն բազմութեան իւր հայրապետական օրհնութիւնները ու հրաժարական ողջոյնը մատուցանելով՝ քաղաքի նահապետ մեհենեցւոյ ի չոգհնաւ, որ յատկապէս Ն.Վ.ԵՀ. համար պատրաստած էր իւ կողմանէ մեծաղօր Կայսեր Ռուսիոյ, որ և ի պատիւ Ն.Վ.ԵՀ. խոշանիշ դրօշակը պարզած էր: Ժամը 6 էր՝ երբ ճանապարհ ելաւ ամենայն յանդուգնութեամբ, հետը տանելով բոլոր ազգին համակրութիւնը ու որդիական սէրը, որոնք երբեմն ազգագայ մեծամեծ ակնկալութեանց և Ն. Սրբ. բազմութեան վերայ ունեցած ապահովութեան երաշխիքն ու գրաւականն են: Ն.Վ.ԵՀ. ուղեկից եղան՝ Պօլսոյ Ազգ. Վարչութեան կողմէ Գեր. Յովհաննէս վարդապետը Մեթեան, Գեր. Խորէն վարդապետ Ղազիկեան, Սրճ.

(1) Սոյն յօդուածը Տփխիսէն եկած են մեզ մէջ հրատարակելու համար:

Աբեդիկ էֆենտին Լիվուղեան, Մեծ. մահտեսի Մաղաք ազգին Պուրատեան, Սալըք Եղուսաղէմի Ամեն. Սրբազան Պատրիարքի և միաբանութեան կողմն Ար. Միմեօն վարդապետը Սեֆերեանց՝ տեղապահ Պօլսոյ փոխանորդի։ Նոյնպես Ղալաթեան Պետր. Սարգիս Սրբազանը և Մուշեղեան Ար. Պղիպոր վարդապետը, որոնք հրաւիրակ եկած էին ի Կ. Պոլիս մայր Աթոռոյն կողմէն։

Մարտ 31 ին, առաւօտեան ժամը մէկին խաղաղութեամբ կը հասնին ի Նաւահանգիստն Փոթի։ Հոն շոգենաւն մէջ կը ներկայանայ տեղւոյն քաղաքապետը իւր համազգեստով, և կը ընդհատէ Ն. Վ. Ե. ի ուղեւորութեան ժամանիլը, և յատկապէս Կովկասեան սահմանաց Խորհրդա. Մինչեայել մեծ Դքսի կողմանէն՝ իրեն եղած յանձնարարութիւնը կը յայտնէ ամենայն վաւերաթիւնեամբ ընդունելու զՆ. Վ. Ե. հայոց կաթողիկոսը. որ և նա իւր կողմանէ խորին շնորհակալութիւնը յայտնելով, և իրեն համար պատրաստուած նաւակն իջնելով կ՚երթեն ցամաք։ Օրուան եղերքը խիտ գեղեցիկ զարդարուած էր դաբնիներով և կերպասանեղով. հոն դիմաւորեց զՆ. Վ. Ե. Գեր. Աբահամ Սրբազան արքեպիսկոպոսը հանդերձ ժողովրդովք՝ շնորհաւորելով նորա գալուստը։ Ուր գնացին անկէ ուղղակի քաղաքապետի տունը, ուր մեծ պատրաստութիւն եղած էր Ն. Վ. Ե. հայոց։ Հոն տեր Աիմաւօնեան Նիկողոս ազգին համառօտ ճառ մի խօսելեայ լի ազգային սիրոյ զգացմամբք, որուն պատասխանեց Վ. Ե. Հայրապետը իւր օրհնութեամբը։ Նոյն գիշերը ծախեզերքը լուսաւորուած էր, ուր զանազան տեսակ հրախաղութիւն եւս եղան ի պատիւ Ն. Վ. Ե. հայոց։

Ապրիլ առաջին օրը փոթիէն մեկնելով հասան ի Պատում, ուր նոյնպէս քաղաքապետը դիմաւորեց զինքը. և հետեւեալ օրը մտան ի Քութայիս. հոն բոլոր հայազգի ժողովուրդը և տեղուեան քաղաքական պաշտօնակալք դէմ ելնելով՝ մեծ ջերմեռանդութիւն կը մատնեցին Ն. Վ. Ե. այլ համբուրելու։ Նոյն գիշերը հոն հանգստացաւ եկեղեցւոյ երէցփոխան Մեծ. Սահման աղային բնակարանը, ուր ժողովրդեան արդի վիճակին վերաբերեալ եղած տեղեկութիւնները առանալով Ն. Վ. Ե. հրամայեց որ աղջկանց հայոց ալ դպրոց մի հաստատուի և պէտք եղած ձեռնտուութիւնն ալ ընելու խոստացաւ։

Մայիս 4 ին հասան ի Սուխում, ուր տեղ զինքը դիմաւորելին հայ և վրացի ժողովուրդք ամենայն խանդավառութեամբ։ Հետեւեալ օրը հասան ի Կուրի, ուր տեղւոյ ընդունելութեան հանդէսը տեղի փառաւորութեամբ էր. երեկոյին շքեղազարդ սեղան պատրաստեց իւր տունը Մեծ. Ընդհանուր Ալիխանովը։ 6 ին հասան ի Ծիխիձայի սգաստիօնը, ուր հիւրընկալեցին զՆ. Վ. Ե. Տփխեցի վաճառականք. եւ նոյն երեկոյին փառաւոր սեղան պատրաստած էր երեւելի վաճառականը Շապրով։ 7 ին՝ ուղեկցութեամբ յիշեալ վաճառականաց և մեծ բազմութեամբ վերադարձ մուտ Ն. Վ. Ե. ի Տփխիս։ Քաղաքին մէկ ժամ մնացած տեղ՝ յատուկ կառքեր պատրաստուած էին Թէ Վ. Ե. Հայրապետին և Թէ իւր ուղեկցաց համար, ոք բոլոց մէջ կարգաւ բաժնեցան։ Հոն դիմաւորեցին ըստ նախընթացին՝ բոլոր արհեստագործք իրենց յատկացեալ դրօշներովը. և Խորհ. Փոխարքային Թիֆլիսեցի զօրքերը և բոլոր հասարակութիւնը Սրբազնասուրբ Հայրապետին երջանիկ գալուստը կը

ընդհատուրեին : Այսպես խուռն բազմութեամբ հասան մինչեւ Փոխարքայի պալատին առաջը, ուր բոլոր կղերական ուխտը եկեղեցական զգեստներ հագած դիմաւորեցին. և Սրբազան Հայրապետը կառքին իջնելով՝ և զգեստաւորած գնաց ի մայր եկեղեցին, ուր Պեր. Մակար Սրբազան արքեպիսկոպոսը ի շնորհաւորութիւն Ն. Վ. Ե. երջանիկ գալստեանը՝ համառօտ բայց ազդու առնութեամբ մի խօսեցաւ, զոր քիչ մի վերը պիտի տեսնեմք : Յետ որոյ Վ. Ե. Հայրապետը առնախօսութիւն մի ըրաւ և օրհնեց ժողովուրդը, և ել Ե. Կայսրն ամենայն Ուսաց. և մեկնեցաւ ի Վ. Ե. հարանն :

Նոյն ամսոյ 9 ին Վ. Ե. Հայրապետը ներկայացաւ Նարեկ. իշխանին Վրաստանու՝ մեծ Դքսին Միխայէլի, որ մեծ և արժանաւոր պատուով ընդունեց զինքը : Այս եղանակաւ էր նորա ներկայացման եղանակը. բայց կառքի մէջ նստած էր Ն. Վ. Եհափառութիւնը՝ Վսեմ. Ծ. Ինէնիֆ զօրապետին հետ. երկրորդ կառքին մէջ Պեր. Սարգիս և Մակար արքեպիսկոպոսունք. երրորդ կառքին՝ Ազժ. Յովհաննէս և Միմէօն վարդապետք. չորրորդին՝ Ազժ. Պետրոս և Խորէն վարդապետք. հինգերորդին՝ Ազժ. Սերովբէ վարդապետ և Պեր. Յովհաննէս Եպիսկոպոս. վեցերորդին՝ Ազժ. Սահակ վարդապետ եւայլն. եօթներորդին՝ Մեծ. Աբեղիկ եֆէնտին և Մազաք աղային եւայլն : Այս օրինակ հանդէսով գնաց Նարեկ. Փոխարքային պալատը, ուր մեծ սրահն մի մէջ հինգ րոպէի չափ սպասելով՝ Փոխարքայի սենեկապետ Ծ. Ինէնիֆ զօրապետի առաջնորդութեամբ մտան այն տեղ՝ ուր կանգնած կը սպասէին 40 ի չափ զօրապետներ : Դահլիճին մէջտեղը դիմաւորեց Նարեկ. մեծ Իշխանը զՆ. Վ. Եհափառութիւնը, և կայնեցաւ դահլճին ձախակողմը Վ. Եհափառ Կայսեր պատկերին առաջը, երեսը դէպ ի Վ. Ե. Հայրապետին դարձուցած. իսկ ձախակողմը դրած էր սեղանի մի վերայ Կաթողիկոսական կնդակը և Աղէքսանդր Նեւսքիի առաջին կարգի նշանը : Նարեկ. Իշխանը Վ. Ե. Հայրապետին Կաթողիկոսութիւնը և ի Լուսաստան գալը շնորհաւորեց, և յետ այնորիկ ներկայացաւ կաթողիկոսական հրովարտակը, ըսելով՝ թէ " Հայոց ազգը զՉեզ Կաթողիկոս ընտրած է, և մեծ Կեսրնակալ ամենողորմած Կայսրը կը հաստատէ զՉեզ նոյն պաշտօնին մէջ" : Յետոյ նշանը մատոյց իրեն, ըսելով. " Ամենողորմած Կայսրը այսու կը պատուէ զՉեզ, և ուրախ եմ որ զՉեզ առաջին անգամ կը տեսնեմ Ուսաց Կայսերութեէ ասպետական նշանով " : Վ. Ե. Հայրապետը ամենայն խոնարհութեամբ և պարտաւորութեամբ ընդունելով բարեմաղթութիւնները ըրաւ, և աւելցուց ըսելով՝ թէ իմ ազգս ու ես յոյս ունիմք մեծագոր Կայսեր շնորհքները վայելելու :

Յետոյ Նարեկ. մեծ Իշխանը խընդրեց Վ. Ե. Հայրապետէն որ իւր հետ եղող եկեղեցական անձինքը ներկայացընէ իրեն. և նախ Պեր. Սարգիս և Մակար Եպիսկոպոսունք, ապա Ազժ. Պետրոս վարդապետը ներկայացան. յետոյ Տաճկաստանէն հետը գնացող ուղեկիցները իւրաքանչիւր կարգաւ ներկայացան : Այն արարողութենէս ետքը Նարեկ. մեծ Իշխանը հետն առնելով զՆ. Վ. Եհափառութիւնը իւր առանձնասենեակը տարաւ, ուր մնաց կէս ժամու չափ. և բոլոր հոն գտնուողներուն խոհուեմով թեթեւ պատուելէն վերջ դարձաւ Ն. Վ. Ե. ի Եհարանն :

Անհատ դիտողութիւն արժանի է, ինչպէս կը գրէ մեր Թղթակիցը, կաթոլիկական հրովարտակը, որուն մէջ կ'ըսէ Վ. Հ. Կայսրը, թէ Զեզ ապիը ընդրէց և ես հաստատեցի. և իբրեւ Ներսէհ Աշտարակեցի. ոչ այլ Զեզ կարողութիւն Ընդէն և եկեղեցոյ օգուտը խորհելոյ և գործելոյ: Հրամարակին ջնջանակը քառակուսի է, և չորս կողմը հայկական նշաններով զարդարուած. վերի կողմի մէջտեղը կը տեսնուի խաչ, զեզարդ եւայլն. մէկ անկիւնը սրբոյն Թադէոսի եւ միւս անկիւնը սրբոյն Բարդողիմէոսի պատկերները. առաջնոյն տակ սուրբ Գրիգոր Լուսաւորչի պատկերը և երկրորդին ներքեւ սուրբ Ներսէսի պատկերը կը տեսնուին, Գառն Աստուծոյ դրօշը, Գրիստոսի գաստառակը եւայլն:

Բ. տուիկ Գեր. Մակար Սրբազան արքեպիսկոպոսի խօսեցած առեհարաւ նութեան օրինակը:

"Քան' ի ընդհարեր գալուստ ծայրագոյն Պատրիարք Կաթուղիկոսի ամենայն Հայոց Տեառն Գէորգայ և Սրսեռի' ի քաղաքն Տփղիս:

"Թող առաք ինձ, Աստուածընակիր Հովուապետ, խորին ակնածութեամբ մատչել յայս հանդէս ընդհարեր և հաւորութեան Ձեր' ի սիրահամբոյր քաղաքս, և հրաստարակել յունկն որդւոց հայրենեաց զայցելութիւն վերնակը նամ Տէրչութեանն երկնից՝ ուսով մեզ զազգասէր Հովուապետ բարի' ի միխիթարութիւն սխոսք սրտից որգւոց մօրն լուսոյ Կաթուղիկէ սրբոյ Էջմիածնի: Այցելութիւն ասեմ տեսչութեան երկնից՝ որոյ նախատահման ունօրհնութիւք այս կեդրոնացուցիք' ի Վերաբժանութեան Ձերում պլիպօր ձայն և գհամակրութիւն ապի լբրեւ հաւատարիմ վկայի' ընտրեցեալ գոլոյ Վեհիդ' ի Տեառնէ յայդ վսեմ պատիւ մեծ Հայրապետութեան Ձեր յատուանեացդս եկեղեցւոյ, առ որ ա մենայն դժայուն սիրտ գասանէ այն հրաշացեալ' ի մեզ զմարգարէական անստերիւր խոստովանութիւն. "Այծ արար աեր զառնեղն իւր ընդ մեզ, և մեք եղեալ բերկրեալք": Սաղմ. ճւե. 4:

Եւ իրաւի' եթէ առցուք' ի կրօնապատութիւն խորհրդոյ զծանրակը շիռ հանգամանս եկեղեցական կառավարութեանց, զատարամ դրութիւն հոգեւորական վսեմ գործոց, և զազգասալաց խնդիր ժողովրդեան' ի հոստաշէր Հովուապետէդ վասն բարօրութեան եկեղեցւոյ իւրոյ սրբոյ, յանհնարիցն է վխոստովանել Հայրապետ մեծ, թէ տակաւին հաշտ ակամբ հայի Բարձրեալն' ի նուիրական տեղի Էջմեան Միածնի իւրոյ և' ի բնագաւառն Հայաստանի: Ասոյ առ' ի նա խանձելի բաղմոց հանդիսացանելոյ զայնս Ձեօք ըստ օրինակի հարցն մերոց առաջնոց, այսօր կարեալ զայդ ձեռանէ Ձերմէ' ի խորհուրդս իւր առաջնորդէ, և փառաւք ածեալ զՁեզ յարեւմտից յարեւելս՝ բանալ Ձեր առաջի զաստարէզ Հքնաղ մեծութեանց, ի նորոգութիւն փառաց Տան Ճարտին սրբութեան, ի բարեկարգութիւն հոգեւորական վսեմ գործոց, և' ի յառաջադիմութիւն ազգային հոգեւոր դպրոցաց բազմոց' ի Թեմն և' ի քաղաքս. յորս ըստ առեալ Ձեզ' ի վերուստ հոգեկան զօրութենէ՝ քրիստոսէ ջահ ճգնեալ էք' ի կործանութիւն խաւար տգիտութեան: Ահա ակնակալութիւնն Հարսին անարատի խոստեղծին Ձերում անախտ փեսայութեան. ահա այսոքիկ էին, զորս զլացան մեզ անցեալ ժամանակք, և զորս յուսոյ

Համառօտ պատմութիւն հաւատոյ, որ 1828 թուին հրապարակեցաւ ի Բէյրութ | ուսուցչական եկեղեցւոյն Հռոմէական Հայոց կողմանէ։

Նախորդ մարտի և ապրիլի ամսաթիւերով հրատարակուած հոգելոյս Պօղոս Պատրիարքի մէկ առնաբանութեամբը ճշմարիտ նկարագիր մի տալ ենք ներկայ դարուս առաջին քառորդին մէջ պատահած | ուսուցչական և Հռոմէական Հայոց կրօնական վէճերուն. որոնց մանրամասն պարագաները ժամանակագրաց թողլով, հոս կ'ուզենք հրատարակել | ուսուցչական ուղղափառ եկեղեցւոյս կողմանէ յօրինուած հաւատոյ դաւանութիւնը, որուն պատճառ տուած են Հայոց եկեղեցիին բաժանեալները։ Ասոնք զի 1828 ամին երբ Ր. Դուռը քաղուեցաւ իւր հրամանին հակառակողներուն դէմ չարաչար բռնութիւն ներ բանեցընել, ինչպէս որ գուշակած էր հոգելոյս Պօղոս Պատրիարքը իւր վերոյիշեալ առնաբանութեանը մէջ, բաժանեալ կողմը սկսաւ զայրութիւն ու սրտին կսկիծէն Հայերը հերետիկոս են կանչել, և ուրիշ քրիստոնեայք եւս անունցմէ լսելով անոնք ալ սկսան գայթակղիլ | ուսուցչական եկեղեցւոյն ուղղափառութիւնը վերոյ։ Ասոնց որոց այն ժամանակի մեր լուսաւորեալ ազգայինք հաւատալեաց մէջ իրենց ունեցած ուղիղ խոստովանութիւնը ճշմարտասէր օտարաց ալ կանխին հասցընելու և զանոնք տարապարտ մեղքէ և գայթակղութենէ և անմեղ Եկեղեցին եւս զրպարտութենէ ազատելու համար փութացին այս օրինակ դաւանութիւն տալ ընդհանուր քրիստոնէութեան դիմաց, իբրև ուղղափառութիւն առաքելական սուրբ եկեղեցւոյս Հայաստանեայց։ Յիշեալ ընդհանրութիւն ազգի ի Հեզ տեսակ նել պահանջուեալ։ Մենք հաւատամք Տէր, ղև կամերն Հեր՝ և գործ կատարեալ վասն բարեհրութեան համագործակ ին եկեղեցւոյ. ուրեմն ձեզ մեզ վճռել զանկակրութիւն նորին, Հեզ մեզ արդարացուցանել և միշտ խոստացեալ Հեր Հանգիստ յաւիտենից։

Այս գործք, հանդիսակից ժողովրդք, որում անհամբերութեամբ հոգւոյ պատեհք. ահա Հայր մեր և Տէր հոգեւոր. ահա Հովուապետ բարի մեզ հովանայս և Հեզ հովուեցեալդ. ահա գոյ ամբառնալ յառաքելական Աթոռ նախահայրապետին մերոյ սրբոյն Գրիգորի մեծի և բարձրացուցանել զազգ և զեկեղեցի ի պատիւ և ի փառս։ Սպաքէն յառաջ մտորիք ձայնակցել ընդ Հն՝ ասելով. Օրհնեալ եկեալդ անուամբ Տեառն. Օրհնեալ է ընտրեալ գալուստդ յանուն հոր մերոյ սրբոյն Գրիգորի | ուսուցչի. Օրհնեալ Գրիգորիսատապետական Կայսրն ամենայն Թուրքաց Աբդեքանդր Նիկոլայեվիչ, որ յաստուածասիրութեամբ իւրով առ ազգս Հայոց նշանաւորեաց վասն մեր զայս օր բարերջանիկ. Օրհնեալ և բարձր իշխան Փոխարքայն Կովկասեան ամենայն Միխայել Նիկոլայեվիչ, որոյ անդադար միջնորդութիւք երջանկանայ այսօր Հայաստանեայց եկեղեցի վայելելով զաստուածատուէն շնորհս Հնչակալին ամենայն Թուրքաց. որովք արդարեւ մեծ պարտ Տէր զաստ նել իւր ընդ մեզ, և մեք եղբք և եղկնուք բերկրեալք. այժմ և միշտ և յաւիտեան։

ի 7 Աղրիլ 1867 ամի, ի վանսն Ամայ եկեղեց-ոյ Հայոց Տէրեսոյ։

ընդհանրութիւն ազգի ի Հեզ տեսակ նել պահանջուեալ։ Մենք հաւատամք Տէր, ղև կամերն Հեր՝ և գործ կատարեալ վասն բարեհրութեան համագործակ ին եկեղեցւոյ. ուրեմն ձեզ մեզ վճռել զանկակրութիւն նորին, Հեզ մեզ արդարացուցանել և միշտ խոստացեալ Հեր Հանգիստ յաւիտենից։

Այս գործք, հանդիսակից ժողովրդք, որում անհամբերութեամբ հոգւոյ պատեհք. ահա Հայր մեր և Տէր հոգեւոր. ահա Հովուապետ բարի մեզ հովանայս և Հեզ հովուեցեալդ. ահա գոյ ամբառնալ յառաքելական Աթոռ նախահայրապետին մերոյ սրբոյն Գրիգորի մեծի և բարձրացուցանել զազգ և զեկեղեցի ի պատիւ և ի փառս։ Սպաքէն յառաջ մտորիք ձայնակցել ընդ Հն՝ ասելով. Օրհնեալ եկեալդ անուամբ Տեառն. Օրհնեալ է ընտրեալ գալուստդ յանուն հոր մերոյ սրբոյն Գրիգորի | ուսուցչի. Օրհնեալ Գրիգորիսատապետական Կայսրն ամենայն Թուրքաց Աբդեքանդր Նիկոլայեվիչ, որ յաստուածասիրութեամբ իւրով առ ազգս Հայոց նշանաւորեաց վասն մեր զայս օր բարերջանիկ. Օրհնեալ և բարձր իշխան Փոխարքայն Կովկասեան ամենայն Միխայել Նիկոլայեվիչ, որոյ անդադար միջնորդութիւք երջանկանայ այսօր Հայաստանեայց եկեղեցի վայելելով զաստուածատուէն շնորհս Հնչակալին ամենայն Թուրքաց. որովք արդարեւ մեծ պարտ Տէր զաստ նել իւր ընդ մեզ, և մեք եղբք և եղկնուք բերկրեալք. այժմ և միշտ և յաւիտեան։

ի 7 Աղրիլ 1867 ամի, ի վանսն Ամայ եկեղեց-ոյ Հայոց Տէրեսոյ։

գաւանութեան հանգանակը յօրինողն է Օ. միւռնիոյ սուրբ Պոլիկարպոս եւ կեղեցւոյ պատուարժան քահանայ եւ մեծ վարժապետ Պետրոս Տ. Յովհաննէս Պրլպայեան, գրեալ յերլսրդն սեպտեմբերի 1828 ամին։

"Վասնզի հաստատուն է, թէ հերետիկոսութիւնն է մերկութիւն մտաց ի մասնս հաւատոյ եւ զրկութիւն հասու դերձ յամառութեամբ կամաց. զի սեմբ եւ վճռովական հերետիկոսութիւն եւ նզովելով բացել ի բաց փախչիմք ի նոցանէ։ Զեմք անտեղեակ մերկութեն Սաբելի՝ որ զմի անձն միայն դնէր յաստուածութիւն Հրրորդութեան։ Վերա հասու եմք չարափառութեանն Արիոսի եւ Մակեդոնի, յորոց մին արարած ասէր զՈրդին, եւ միւսն զՀոգին սուրբ։ Զի ծածուկ առ ի մէնջ հերձուածն Նեստորի՝ որ չարաչար բաժանէր զերկու բնութիւնս ի Քրիստոս, եւ երկու անձն դնէր բաժանաբար։ Ոանաչեմք եւ զմերկութիւնն Նեսաքեայ, որ անդ իմաստ խորհրդով չիմէր եւ խառնակէր զաստուածային եւ զմարդկային բնութիւնսն ի Քրիստոս։

"Այսպէս յայտնի են մեզ եւ այլ եւս ամենայն հերետիկոսացն մերկութիւնք, որք յընդհանուր եւ յուղղափառ ժողովոյն դատապարտեցան։ Ասի եւ մեք իսկ ուղղութեամբ սրտի եւ հոգւոյ հաւանձայնեալ ընդ սուրբ ժողովն Նիկիոյ, Կոստանդնուպօլսի, Եփեսոսի եւ այլոց եւս ուղղափառ ժողովոց՝ ընդունիմք եւ դաւանիմք զառ ի նոցանէ հաստատեալ հաւատ՝ ներբ ընդունութեամբ ընդհայց Հոգւոյն սրբոյ պարզաբանեալ, եւ հիմնեալ աստուածային եւ առաքելական անսասելի բանիւք։ Եւ խոստովանիմք եւ ոչ ընդդատնիմք զընդդէմն ներին, որ ներհակ պատուածային եւ առաքելական սահմանի՝ մերկ խոտորի յուղղութենէ այլ ստորագնահատութեամբ ի հաւատոյն։

"Ընդիմք առ մեզ պհանգանակն Նիկիոյ եւ Կոստանդնուպօլսի, զոր եւ մի առ առեալ ընդհատնուք յամենայն չեկեղեցի մեր, զի զմատունս հաւատոյ եաց համառօտ եւ յոտակ մտօք առաջի առնէն լուսաւորութեամբ ի հոգւոյն սրբոյ, եւ հաստատութիւք յատուածաշունչ գրոցն սրբոյ՝ ուղիղ դիտաւորութեամբ։

"Զոր որոյ՝ հաւատամք Երրորդութիւնն սուրբ. եւ զերիս անձինս դաւանիմք ի միում բնութեան ի սէրութեան եւ իշխանութեան. անսկիզբն անեղ՝ անժամանակ՝ անչափ՝ անպարագրելի եւ անսահման։ Իսկ զանուանս երից անձանցն որոշեալ ունիմք ծանօթագրեալ՝ Հայր եւ Որդի եւ Հոգի սուրբ։ Ոչ զերիս անձինս միշ երեք աստուածք դաւանիմք, այլ՝ մի Աստուած, մի կամք, մի թագաւորութիւն, մի իշխանութիւն յաւէտ անքակութեամբ սերտեալ ի յաւիտենից, յորս է մի եւ անդրադարձ բնութիւն անճառելի։

"Հաւատամք զՀայրն Աստուած անեղ՝ անձին եւ անսկիզբն աղբիւր գերագոյն Աստուածութեան. եւ սկզբնաւորութեան անեղական արեգական երկուց առաջնածեղէն լուսափայլութեց անչնորհ եւ անսրոշելի. եւ աղբիւրեղէն Աստուածութիւն եւ Աստուածածնողաղանին Աստուածածնողութեանց ըստ Դիոնէսիոսի։ Որ յանհուն եւ յաւիտենական էութենեան իմացականութենէ ծնաւ անսկզբնաբար զհաւատարակիցն էութեան իւրում զՈրդին միածին. եւ ի համահաճութենէ ի ծայրագոյնս բարի յէութենն բղխեաց յաւիտենականաբար զանըսպառ աղբիւրն բարութեան զՀոգին սուրբ։ Օ. ի պքան Հայրն՝ Հայր, նոյն

և Որդին՝ Որդի, և Հոգին սուրբ բուն Աստուած. և չէր ժամանակ, յորժամ չէր առնամ և ընդ նմա Որդի և Հոգի. յորոց միակամ բարերարութենէ ստեղծեալ գոյացան ամենայն արարածք երեւելիք և աներեւոյթք։

“Աստուածք և Որդին միածին անսկիզբն և անժամանակ ծնունդ՝ ի Հօրէ, անայլայլելի և անփոխոխ պատկեր էութեան Հօր. և նոյն՝ էութեամբ և գոյութեամբ ընդ Հօր և ընդ սուրբ Հոգւոյն, փառակից և արքայակից իւր համագոյակցաց. Աստուած Աստուծոյ, լոյս՝ ի լուսոյ, անեղ յանեղէ. և իսկական նկարագիր գոյացութեան, և աստուածատուր շառաւիղ սկզբնաղբյս արմատին, որ ընդ ամենայն յամենայնի, և ինքն միոյ աստուածութեան։

“Աստուածք և Հոգին սուրբ բղխումն՝ ի Հօրէ անսպառ և անձառ՝ ի Հայրաշարժ աղբերէ անտի Հօրն եւ ումէք դեռ միջոցաւորել. և ընդ Հօր և Որդւոյ միով փառատրութեամբ պաշտեալ և երկրպագեալ. աեր և կեն դանարար բոլորեցուցոյ, և ճշդրտապատում Թարգմանն խորհրդոյ աստուածայնոյ. որ խօսեցաւ յօրէնս և ի մարգարէս և յաւետարանս։ Զատ սպառճառին՝ յառաջ բղխեալ՝ ի Հօրէ միայնոյ, որպէս և իւր իսկ համագոյակիցն անշուշտ վկայէ. “Հոգին ճշմարտութեան որ՝ ի Հօրէ ելանէ”. իսկ ըստ ումեք կարեւորութեան և շնորհաբաշխութեան՝ հաւասար Հօր և Որդւոյ. որպէս և նոյն ինքն Փրկիչ հեռեւեցուցանէ յասելն առ աշակերտան. “Գիմեմ անտի առնուցու և պատմեցից ձեզ”։ Ո՛չ ի մի գիւտութիւն է յերկս անձինս։ Նա զոյն դաւանութիւն առ Հոգին սուրբ՝ ըստ կրճնական դաւանութիւնն եկեղեցւոյ և հանգանակն Կոստանդնուպօլսոյ հաստատ սահմանեն. և Յոյնք իսկ հաստատութեամբ ունին և խոստովանին առանց այլայլութեան։

“Աստուածք և՝ մարդեղութիւն Բանին Աստուծոյ ուղղափառ միօք և ստոյգ դաւանեմք. զի նոյն ինքն անժամանակ ծնունդն հայրենի անպարագիրն յԵւթեան վասն փրկութեան մերոյ իջեալ ըստ աւետեացն Գաբրիէլի՝ անեռիմն յաղացաւ յորովայնի անարատ կուսին Աստուածածնէ Մարիամու համահաճ կամօք Հօր և Հոգւոյն, և առեալ զբնութիւնն մեր՝ ի մարթուս յարենէ նորա միաւորեաց ընդ իւրում Աստուածութեան անշփոթ և անբաժանելի՝ Թագաւորական խառնութեամբ. որպէս լուսոյ ընդ օդոյ, և հրոյ ընդ երկաթոյ. և կամ հոգւոյ ընդ մարմնոյ, նոր և աքանչելի միաւորութեամբ։ Ոմանք զի Թէպէտ և Աստուածն կատարեալ եղեալ մարդ կատարեալ, սակայն ոչ անյօդ և պարզ բնութիւնն աստուածային՝ ի Թանձր և յօգաւոր բնութիւնն մարդկան փոխեցաւ. և ոչ իսկ մարմինն պակաս՝ ի յանօսր և յանըմբռնելի բնութիւնն աստուածային. այլ կացին միասին երկաքանչիւրն առանց փոփոխման և առանց այլայլութեան, անշփոթ և անբաժանելի միաւորեալ. ուստի և յերկուց կատարեալ բնութեանց անշփոթ և անբաժան միաւորելոց եղեալ մի անձն, մի գէմ, և մի անձնաւորաբար փառաւորեալ բնութիւն. և ոչ ըստ Նեստորի և Նեստորեայ մոլար չարախառնութեանն, զորս նզովէ սուրբ եկեղեցի։ Նա ինքնամեայ ժամանակաւ ժողովեալ յորդանդի անարատ կուսին Աստուածնէ ծնաւ որպէս մանուկ, անխախտ պահելով զկուսութիւնն ծնողին իւրոյ՝ զի անեռիմն էր յաղթին, և անապական՝ ծնունդն. ոչ սկիզբն ունելով աստուածութեան և ոչ վախճան մարդկութեան. զի Քրիստոս Յիսուս երեկ և այսօր՝ նոյն և յաւիտեան

ըստ սրբազան առաքելոյն Պօղոսի ։

“ Ու նոյն ինքն կուսական կաթամբ բըն կերակրեալ գայ յաճումն հասակի ըստ անօրէնութեանն , և զամն երեսուն ջղեալ ի վերոյ երկրի եկեալ մկրտի ի Յովհաննէ ի գետն Յորդանան . և յայտնեալ վկայի ձայնիւ Հօր և աղաւնակերպ իջմամբ սուրբ Հոգւոյն ։ Աստուածահրաշ աքանչելեօք և վարդապետութեամբ բարերարէ տգէ մարդկան . չարչարեալ խաչի , մեռանի , և մարմինն դնի ի գերեզմանի միաւորեալ աստուածութեամբն . և հոգին իջանէ ի դժոխս անբաժանելի աստուածութէն ։ Յերրորդ աւուր ինքնիշխան զօրութեամբ յառնէ ի մեռելոց . և բազմից երեւի աշակերտացն ի հաւատոյ յարութեան իւրոյ , որով և զնունութիւն մեր յարոյց ի մեռելութենէ մեղաց ։ Ու նովին առեալ մարմնովն համբարձեալ յերկինս նստի ընդ աջմէ Հօր ի նախաւնակ աթոռն հաւասարութեան՝ յորմէ և գալոց նաւ ի մեկուսացս ։ Դարձ է և նա վին մարմնով և հայրական փառօք դատել զկենդանիս և զմեռեալս , և տալ զհատուցումն իւրաքանչիւր գործոց , ջանելով երբեք զվախճան թագաւորութեանն ։

“ Հաւատամք ի մի միայն կաթուղիկէ և առաքելական սուրբ եկեղեցի , որ է հաւաքումն ամենայն ուղղափառ քրիստոնէից մկրտելոց յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ յամենայն ազգաց , որոյ իսկական գլուխն է նոյն ինքն աէրն մեր Յիսուս Քրիստոս ։

“ Հաւատամք և ի մի մկրտութիւն , յապաշխարութիւն , ի քաւութիւն , և ի թողութիւն մեղաց , ի յարութիւն մեռելոց , և ի յաւիտենից գատաստան նոյն հոգւոց և մարմնոց , յաւքայութէին երկնից և ի կեանն յաւիտենական ։

“ Ու միաձայնեալ ընդ նմին ինքեան կաթուղիկէ և առաքելական եկեղեցւոյ նզովեմք զայնոսիկ , որք ասեն , էր երբեմն յորժամ ոչ էր Որդի , կամ էր երբեմն յորժամ ոչ էր սուրբ Հոգի . կամ թէ յոչէից եղեն . կամ յայլմէ էութենէ ասեն լինել զՈրդին Աստուծոյ կամ զսուրբ Հոգին ։ և թէ փոփոխելիք են , կամ այլայլելիք ։ Զայսպիսին զի և յառաջին ժողովն Նիկիոյ ի վախճան հանգանակին ի նոյն կնքեցաւ ի ժողովեալ հարց . զոր և սուրբ Դրիգոր Լուսաւորիչն մեր ընկալեալ կընքեաց իւրով ստորագրութեամբն՝ ասելով . “ Լաւ մեք փառաւորեցաք որ յառաջ քան զլսելիսեանն , երկիւղած գտանելով սրբոյ Երրորդութեան և մի Աստուածութեանն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ , այժմ և միշտ և յաւիտեանս . ամէն ։ ”

Ի յաջորդն ։

Գերապատիւ Յակոբ Սքեպչեան արքեպիսկոպոսի և իւր ուղեկից է Սուեդ հասնիլը ։

Ապրիլ 27 Թուով նամակ մի ստացանք Գերի . Յահակ արքեպիսկոպոսն , որ իրենց ի Սուեդ հասնիլը կը ծանուցանէ հանդերձ ուրիշ հետաքրքրական տեղեկութեամբք ։

Անգիլտաս Ագնլոյ Վսեմ . ընդհանուր հիւպատոսի հետ տեսութիւն ընելէն յետոյ , նորա տուած յանձնարարական թղթերով յիշեալ ամսոյն 10 ին՝ աւագ երկուշաբթի օր Եգիպտոսէն կը մեկնին երկաթուղիով , և նոյն օրը երեկոյեան գէմ գրեթէ 7 ժամու միջոցին կը հասանին ի Սուեզ , ուր գալ ղեկավարն պանդոկի (օթել) մի մէջ սենեակ մի վարձելով կը հանգստանան ։ Նոյն ժամուն առանց ժամանակ անցը նելու՝ Անգլոյ պարոն հիւպատոսի ի մոց կուտան իրենց գալը , և հետեւ

եալ առաւօն պայմանեալ ժամուն տեսութեանը երթալով ընդհանուր Հիւպատոսին յանձնարարական գիրը կը մատուցանեն. և խիստ մեծ պատուով ընդունելութիւն գտնելնէն ի զատ, կը յայտնէ իրենց պարոն Հիւպատոսը թէ ամէն ինչ որ կարելի է իրեն՝ պատրաստ է կատարել ամենայն յօժարութեամբ: Վեր. Խահակ եպիսկոպոսի համբը օր յառաջ ճամբայ ելլելը լսելով, և դժբաղդաբար իրենց հոն հասնելէն 3 օր յառաջ շոգենաւը մեկնած գտնուելով, կըստիպուին 12 օրն ալ հոն սպասել հետեւեալ շոգենաւով երթալու: Ու թէպէտ պարոն Հիւպատոսը Այգիպատոս ընդհանուր Հիւպատոսին հեռագրաւ խնդրեց որ Տէր Թումթենէ հրաման առանց յառաջ շոգենաւ մի հանելու իրենց համար, այլ ամենայնիւ ընդհանուր Հիւպատոսը օր մի յառաջ Խարիզու պրուեստահանդէսին համար ճամբայ ելած լլլալով, կըստիպուին սպասել:

Այս արգելքէն առանց Աստուծոյ կամացը չէր, ինչպէս հիմայ պիտի տեսնենք. վասն զի երբ մտադիր եղած էր Վերա. Սրբազանը Աբժ. Տիմոթէոս վերադառնալ հետ կրկին Այգիպատոս դառնալ ու հոն կատարել տեսքը զոր ի ծոնը, աչքընկնուն քանի մի հայ պանդուխտներ պատահելով՝ անոնցմէ կ'իմանան որ 100 ի չափ ազգայիններ կան այն կողմերը աշխատելու համար եկած. ուստի իրենց սրբազան պարտաւորութեանցը հակառակ սեպելով զանոնք հոն թողուլ երթալ այնպիսի օրերէ, և համոզուած ըլլալով՝ որ "յառաջ Աստուծոյ օրհնեալ կամեցողութիւնն է նոյն տեղի հայ ժողովրդեան սիրոյն հատնոր պիտինք հոն արգիլողը", ինչպէս կ'ըսէ նամակին մէջ, վասն որոյ կ'որոշեն տեսքը Օսմանկին առաւօտուն ժամերգութիւն կատարել հոն, և բոլոր ժողովուրդը խոստովանեցընել ու հաղորդել սրբազան Խորհրդոյն: Ուստի կը հարկադրին Դաղղեայ հիւպատոսին տեսութեան երթալ, և կերպով մի իրենց դիտաւորութիւնը անոր կը յայտնեն, որ կը խոստանայ իրենց կարգադրայ լմնցընել և անոնց մատուռին մէջ կատարել տալ ժամերգութիւնը: Բայց երբ անոնք կը մերժեն, ինչպէս որ կանխաւ գուշակած էր Վեր. Խահակ եպիսկոպոսը, պարոն Հիւպատոսը իւր խնդիրքը չընդունելուն վերայ կարեվէր սիրտը խոցուած, իւր յատուկ սենեակին մէջ կ'առաջարկէ որ ժամերգութիւնը կատարեն, զոր իրեն մեծ պատիւ և փառք կրհամարէր: Ուստի Խթժան օր յատուկ մարդով մի լուր կը խրկեն ի Շարլըֆ, որ Սուէզէն 4 ժամ հեռու է և անուշ ջրով կ'երթլուի, ուրտեղ նոր բացուելիք ջրանցքին համար 70 հայ պանդուխտ կ'աշխատին: Անոնց 65 ը Անէցի են, և ինչպէս յայտնի կ՝ խիստ հաւատաւոր ու ջերմեռանդ մարդիկ ըլլալով, Աստուծմէ կարգաւոր մի կը խնդրեն եղեր՝ որ զիրենք հաղորդեցընէ և հոգեւորապէս մխիթարէ: Ուստի հրաւիրանաց գիրը ընդունելնուն պէս, դիշերուան ժամը մէկէն սկսելով մինչեւ հինգ՝ կարողութիւն ունեցող անձինք ուրախութիւ և փառք տալով Աստուծոյ նախախնամութեանը՝ կը փութան ի Սուէզ գալու: Անոնք դեռ չհասած՝ Դաղղեայ պարոն Հիւպատոսին յանձնած սենեակը արդէն փոքրիկ մատուռ մի դարձած էր հնարիւ Աբժ. Տիմոթէոս վարդապետին, և սկսած էին ի Սուէզ գալու նեալ ապրանքը կանչել ու խոստովանեցընել, ուր հասնելով նաև Շարլըֆիլ ժողովուրդն ալ, ժամը վեցին խոստովանութիւնը կը լսացընեն:

Հետեւեալ առաւօտուն զատկական խորհրդոյն ժամերգութիւնը կը

սիոյն կառավարել ի ներկայութեան պատրիարքին Հիւսպատոսին. հոն բոլոր ջերմեռանդ ժողովուրդը կը հաղորդուի, և Գեր. Խահակ Սրբազանը համառօտ առենաբանութիւն մի զանոնք մխիթարելու ու արձակելով, կ'օրհնէ և զբարեմիտ Պ. Լ Հիւպատոսը, գալեւոյ նոցա ցոյց առած բրիստոնէավայել մարդասիրութիւնը և ազատամտութիւնը, որու իրենց խորին շնորհակալութիւնը յայտնելով և Սմեռն. Սրբազան Պատրիարքէն հօր լուսանկար պատկերը նուիրելով, նա ալ փոխադարձ իւր պատկերը կը խրկէ նամակաւ առ Սրբազան Պատրիարքն։

Այս ալ չմոռնանք ըսելու, որ պանդուխտ հայոց մէջ 30 ի չափ անձինք ակարութեան և հիւանդութե պատճառաւ չկրնալ դալեընուն Գեր. Խահակ Սրբազանը զՄրժա. Տիմոթէոս վարդապետը յատկապէս կը խրկէ ի Շարըճ, ուր զանոնք խոստովանեցընելով կը հաղորդէ. և յետոյ ժողովը դեան հետ առնոյց գերեզմանատունը կ'երթայ, և հոն առանց Թաղման օրհնութեան Թաղուած չորս կարճ ներբեցեղոց գերեզմաններուն վերայ Թաղման ամբողջ խորհուրդը կատարելով կ'օրհնէ։ Այս խեղճերը Թէպէտ և խոստովանիլ ու հաղորդուիլ կրնդունած են լսելի քահանայիցմէ, բայց նոքա չեն ուզած մոռանալ։ Յիշ. չեալ գերեզմանատունն ալ Թէպէտ և քառնոց անուամբ կը յիշուի եղեր, սակայն տեղացի Ֆենարիան նոյն տեղը ձրի ընտհած է ի խնդրոյ բոլոր բրիստոնէից՝ որոնք հոն կ'աշխատին։ Տիմոթէոս վարդապետը լսելով որ հոն ի Շարըճ խարբերդցի Ալէքսան ան նուն հայուն մէկը պարտքի համար բանտարկուած է մահմետականի մի հետ մէկտեղ, բաւական դժուարութեամբ միջոցը գտնելով ղերկուան ալ կ'ազատէ, և ինքը հետեւեալ օրը կը դառնայ ի Սուէդ։ Նշանակութեան արժանի է Ալբ. Տիմոթէոս վարդապետի ազգասիրութիւնը և բարի նախանձը, և իւր սրբազան պաշտօնին մէջ ցոյց առած անձնանուիրութիւնը զոր անչահասէր օգտով կը կատարէ ի պատիւ սուրբ Ալթառոյս, չընդունելով և ոչ իւր ըրած ծախքը զոր յօժարութեամբ կ'ուզէին հատուցանել պանդուխտ ազգայինք. որոնք մեծ երջանկութիւն համարելով իրենց՝ սուրբ Ալթառոյս նուիրակաց հոն արժեցուիլը և արտատուալից աչօք իրենց շնորհակալութիւնը յայտնելով, կը յայտնէին միանգամայն իրենց սրտին ցաւը՝ զուրկ ըլլալով հոգեւոր առաջնորդէ մի, զոր Ալէքսանդրիոյն կը յուսան, որ 7 ժամ հեռու է իրենցմէ, և տարին գոնէ երկու անգամ կրնայ դէպ քահանայի մի միջոցաւ անոնց հոգեւոր սէրոքը մատակարարել։

Ապրիլ ամսոյ 27 ին անդղիական շոգենաւով կը մեկնին ի Ալիտահ։

ԿՐՕՆԱԿԱՆ

ՍԱՄՈՒԵԼ ՕԱԲՐԻ ԵՒ ԻՒՐ ԳԻՐՔԸ

(Շարունակութիւն. տես թիւ 4։)

ԳԼՈՒԽ Ը.

Թէ ինչ կերպով Բրէտոսի սպանուելէն յետոյ յոյները Հրեաները ըսր մարգարէութիւն Դանիէլէ։

Այս վախճան, Տէր իմ, թէ ահ է եւ սոսկալի մարդարէին ըսած այն արդարու ու անմեղը. և ո՞վ է սոսկալ ծախուած արդարը, որոյ համար կ'ըսէ Տէր՝ Եմմէս մարգարէին ձեռօք՝ ինչպէս վերի ըսինք, Թէ չորրորդ ամբաշտութեան համար Աբեսաեայ երկիրն երբեք չի

պիտի դարձընէ : Կ'երեւի նաև , Տէր իմ, թէ Դանիէլէ թ. գլխոյն մէջ գրածը կատարուեցաւ, ուր կ'ըսէ. "Աստուածն երկու եօթնեակաց լանալէն յետոյ պիտի սպանուի Քրիստոսը. եւ այն ատեն պիտի գայ ժողովուրդը գալիք առաջնորդին հետ մեկտեղ, ու պիտի աւերէ քաղաքը, պիտի խորտակէ տաճարն ու խանգարէ զանիկայ, ու պիտի վերնայ զօրը ու լցուի ապականութիւն յաւիտենական" (1) : Նէ ատրաւկայ էկայ , Տէր իմ, որ յաւիտենական աւերմանն ապականութիւնը այս գերութիւնն է, որուն մէջ հազար տարի է կը գանուինք : Նէ Աստուած մարգարէին ձեռքով յայտնի կ'ըսէ , թէ երբ որ սպանեն Քրիստոսը , յաւիտենական աւերութիւն ըլլայ, ինչպէս է մեր աւերութիւնը Քրիստոսը սպաննելնէն ի վեր : Նէ Աստուած զմեզ յաւիտենական աւերութենէն այն ժամանակ վախեցոյց՝ երբ զՔրիստոսն սպաննեցինք : Նէ եթէ ըսեմք թէ Քրիստոսի մահուանէն առաջ անապատ ու աւերակ գարձանք մինք, ատոր պատասխան կ'ուտան քրիստոնեայք, թէ անոր մահուանէն առաջ մեր աւեր ըլլալը միայն 70 տարի էր , և յետոյ Աւետեաց երկիրը գարձանք կրկին , ու Աստուած պատուեց զմեզ և իւր հնարհքը մեզ տեսաւ : Բայց, Տէր իմ, ես այս մարգարէութեանս դէմ ընդդիմութիւն մի չեմ տեսներ , որովհետեւ գործքով կ'ապացուցանեն մեզ , թէ տաճարը կրկին շինուելէն յետոյ , երբ վաթսուն երկու եօթնեակները լրացան , այսինքն մարգարէութիւնը հրատարակուելէն վաթսունեւերկու եօթը , այն է Դանիէլի նայն եօթանասունեակի եօթներորդին ջրբողջ տարին , այն ժամանակ սպանուելին Քրիստոս մեր հայրերը , այսինքն Բաբելոնէն ելլելնուն 487 տարին , եւ աշխարհի ստեղծման 4036 տարին . եւ յետոյ եկաւ առաքնորդը , այսինքն Տիտոս ու Հռովմայեցւոց ժողովուրդը . և այս մարգարէութեան մէջ բառաձեռքը մեր գլխուը բերին , որ հազար տարի է հիմայ և քիչ մ'ալ աւելի : Նէ Թէպէտ Աստուծոյ բարկութեան ներքեւն եմք, սակայն յոյս այլ ունիմք երեն : Նէ եթէ ըսելս ըլլամք թէ Քրիստոս դեռ չեկաւ , այլ պիտի գայ, և եթէ կրկին պիտի առնուի Աւետեաց երկիրը , և թէ քաղաքը նորին պիտի շինեմք և Աստուծոյ հնարհքը և մեր երկրին մէջ պատիւը պիտի ունենամք , և թէ այս աւերութիւնը յաւիտենական չէ . կը պատասխանեն մեզ քրիստոնեայք թէ՝ ուրեմն Յիսուս Քրիստոս դեռ չսպաննեցիք , ու Տիտոսին և Հռովմայեցւոց ժողովրդեան գալուստնէն կըսպասէք , և այն աւերութեան՝ որ այս հազար տարուանէն աւելի վաթ է : Սխալ ու եղուկ, Տէր իմ, վասն զի պատճառ մի չկայ , և ոչ յայտնար ապաւէն ու ապաստան մի : Սյսու ամենայնիւ ինչ որ այլ պատասխի Աստուծոյ եմք ամէն դէպքերու մէջ, թէ որ յաւասիք լրեն :

(1) Եւ յետ վաթսուն և եօթից եւեթնեորդոցն, բարձցի օծութիւնն , և իրաւունք ոչ լինի ինձա , և քաղաքն և սրբութիւնն ապականեսցին առաջնորդաւն հանդերձ որ գայցէ . և վախճանին հեղեղաւ , և մինչև ի վախճան պատերազմին համառօտեալ կործանեալ զապականութիւն . և զօրացուսցէ զուխտ բազումս , եւ մի եւեթնեորդի , դադարեցուսցէ պատարագս և զպատարագս , և մինչեւ ի Տոյնս անկեսցէ նմա ապականութիւն , և մինչեւ ցվախճան և ցտագնապ կարգեսցէ իվերայ ապականութեանն . և զօրասցէ զուխտ բազումս : Եւեթնեորդի մի և կէս եւեթնեորդի բարձցին զնա և նուէրք . և ի վերայ տաճարին պղծութիւն աւերածոյն կացցէ , և մինչև ի վախճան ժամանակի կատարած տացի ի վերայ աւերածին : Դան . թ . 24 . 25 :

ԳԼՈՒԽ Թ .

Թէ Քրիստոսի գալուստը երկու են :

Կը վախնամ, տէր իմ, ջրլայ որ Քրիստոս իւր առջի գալուստն եկաւ ու

կատարից . պահվեուս մեր գլխերուն մէջ անոր երկու գալուստ կը դանեմք : Ա՛ղջի գալուստը մարգարէք կը նշանակեն իբրեւ ազքատ ու խոնարհ . իսկ երկրորդը՝ փառաւոր ու մեծամեծ . վասն որոյ ես այլ երկու գալուստեան համար ինչ որ պատահեցայ սուրբ գրոց մէջ՝ հոս մէջ պիտի բերեմ : Ա՛ղջիկն գալստեան համար կ՚ըսէ Եսայի Օ՛աքարիայի բերանով . “ Ուրախ եղիր դուստր Սիոնի . ահա քո վարդապետդ կուգայ ազքատ , և իշու վերայ հեծած ” (1) : Նոյն գալստեան համար կ՚ըսէ Եսայի գիրքն առաքեալ , ու Դանիէլ՝ սպանած . Օ՛աքարիա ու Մալաքի՝ ծախուած . և ասոնք ամենքն այլ կատարեցան ինչպէս ցուցցի ու պիտի ցուցնեմ այս գլխոյս մէջ : “ Օ՛նիքը բանի տեղ չտեսնցինք , չճանչցանք , ինչպէս Եսայի կ՚ըսէ . այլ անոնց ըսինք և անոնցմէ առնելի զօրացանք ” (2) : Իսկ նորա փառքն ու մեծվայելչութիւնը երկրորդ գալստեանը յայտնի կ՚ըլլայ , երբ կրակ ու բոց աներ գիմացին կ՚երթայ ու կ՚այրէ կը մրկէ ջուրս դին եղոյզ նորա Թշնամիքը , ինչպէս որ Դաւթի և Եսայեայ մարգարէի բերանով ըսաց Աստուած . (Սաղ . Ղ . 3 : Եսայ . Խ . 4) : Ես կը վախնամ , Տէր իմ , չըլլայ որ Քրիստոս մահուան կրակով և սուր ուրիշ կերպով գատելու ըլլայ զմեզ . վասն զի մեք սպանեցինք այն մարգարէներըն որ նորա համար մեզ առեխս տուին . ինչպէս Աստուած մեզի դեմ Եղիա մարգարէին բերնով կը վկայէ չորրորդ

(1) Ուրախ լեր յոյժ դուստր Սիոնի . բազմացիր դուստր Երուսաղէմի . ահա Թագաւոր քո գայ առ քեզ , արդար և փրկիչ , նայն հեզ և հեծեալ ի վերայ իշոյ և յաստանակի նորայ : Զաքա . Թ . 9 :

(2) Այս վկայութիւնս չկայ մեր Թարգմանութեանց մէջ : Եւ Ծ . Գ . 3 գլուխը . սա միայն կը գտնենք , “ Դարձուցեալ զերեսս իւր անարգեցաւ , և ոչ ինչ համարեցաւ ” :

Թագաւորութեանց գլխին մէջ (1) : Այս պէս սպանեցինք այն ազգս որ համար Աստուած անվախճան բարկութեամբ բարկացաւ մեզ : Սակայն Աստուծոյ եմք ամեն դէպքերուս մէջ , թէ որ անոր յուսալու ըլլանք :

Ի յաջորդն :

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ

Ներկայ ամսոյս 2 և 8 ին երկու անգամ հայկերուքի հանդէս տեղի ունեցաւ : Ա՛ղջիկը տեղւոյս Վեմ . Լիխա փաշայի կողմէն առ բոլոր զինուորական դասս , ուր հրաւիրուած էին նաեւ Իսլամոյ աւագանիքն ու Վեմ . կառավարիչ Նազիք փաշայն : Իսկ երկրորդը՝ որ միրազ Ալի պէկին կողմէն տրուեցաւ , աւելի հանդիսաւոր էր և արժանի նշանակութեան : Քանզի բացի ի զօրսդ զինուորներէն ու զինուորական պաշտօնեաներէն՝ յատկապէս հրաւիրեալ էին նաեւ Պատրիարքունք և Հիւպատոսք : Ա՛յսու ամենայնիւ առաջինները անճամբ չկրնալ երթալնուն , և միրազ Ալի պէկին հրաւէրը սիրով ընդունելով , իւրեանց կողմէն երեք վանքերն ալ Թարգմանն նին խրկեցին : Հայկերուքի համար ա՛ր պատրաստած տեղն էր Դամասկոսի կառուցած գրան կողմը հարթ գաշտակի մի մէջ վրանները տակ՝ ուր երեւելի կառնականաց համար երկու տեղան զարդարուած էր . առաջին տեղանցն նա խագահ էր Վեմ . Նազիք փաշայն , Լիխա փաշայն , Մեծ . հիւպատոսք՝ իւրեանց մարդիկներովը և Ա՛ղժ . երեք Թարգմանք : Սուրբ Ա՛թոռոյս կողմէն դնացողն էր աւագ Թարգման Ա՛ղժ .

(1) Այս խօսքս Դ . Թագաւորութեանց մէջ չկայ , այլ Գ . Թագաւորութեանց ԺԹ գլուխ ու 10 համարին մէջ պատկս կ՚ըսէ , “ Եւ զմարգարէս քո կատարեցին պոմ ” :

և բարեջան Աբրահամ վարդապետեան, որ այսպիսի պատրաստութեան մէջ խիստ պատուական և արժանաւոր կերպով ներկայացընող է զառիթ Աթոռս և ընտրին Ամեն. Արքեպիսկոպոսութիւնը։ Երկրորդ սեղանին նախագահ էր մեծապատիւ Մխիթարեան և քաղաքիս առաջնորդը՝ ուրիշ նշանաւոր կոչնականներով։ Այն հայկերութիւն համար պատրաստուած ուրիշ կերակուրներէ և անուշեղէններէ ի զատ դլխաւոր սեղանին էին 75 հատ խորոված գառ։ Սեղանին առաջ զբաղելու զբոյց կրթութեան համդէս մի ներկայացուց, որոյ մէջ այնքան ճարտարութիւն, դիւրաշարժութիւն և վինուորական կարգեր ու հնարքներ ի գործ դրին, մինչեւ անգամ զարմացը նել զներկայիսները՝ որ ներկայ էին հոն։ Ամէն ի զատ ուրիշ մարմնոյ վարժութեան և տեսակ տեսակ խաղեր եւս կատարուեցան։ Սեղանի և ուրիշ ժամանակ միջոց առ միջոց ընտիր ուքաղցը եղանակներ կը հնչեցէր վինուոքական նուագաց։ Այսպէս վերջացաւ այն ուրախութեան հանդէսը ի մեծ գոհութիւն բոլոր հրաւիրելոց, և ի պատիւ մեծապատիւ Ալի պէկին։

— Ընդհատ առաջին 21 ին առաւօտեան վտեսեցաւ Երուսաղէմ Առաջնորդ Գէր. Գաբրիէլ Ս. Արքեպիսկոպոսը ի խոր ծերութեան, որոյ մահը ոչ միայն իւր սիրելի ժողովրդին, այլ և բոլոր միաբանութեանս սրտին մեծ ապդ և տրտմութիւն պատճառեց։

Հանգուցեալ Սրբազանը գրեթէ 35 տարիի չափ առաջնորդութեան պաշտօնը վարեց։ Ինքը առաջ Աթոռոյս հարազատ միաբաններէն էր։ 1832 ին երբ ընտրեցաւ Երուսաղէմի Արքեպիսկոպոսը առաջ Աթոռոյս նեղ ժամանակին Եգիպտոսի առաջնորդութենէ ետ կանչուեցաւ ուրիշ աւելի կարեւոր պաշտօն յանձնուելով իրեն, իւր աեղը Գաբրիէլ եպիսկոպոսը իրեւ ապա դեռ վարդապետ էր, իբրեւ արժանաւորագոյն նոյն վիճակին առաջնորդութեան։ Հոն հանդիսացան ախտաժանեան զանգով իսկամբ և հոգ տանիլ իւրեան յանձնուած ժողովրդին պիտոյից և առաջ Աթոռոյս կալուածոց։ Իւր դլխաւոր ձեռնարկութիւններէն մէկն եղաւ առաջ եկեղեցւոյն շինութեանը ձեռք զարնել՝ կանխաւ հրամանի խնդրելով լաւսահոգի Պօղոս Պատրիարքէն, որ առաջ Աթոռոյս պարտուց ազատութեանը համար ապդին հաճութեամբը հոգաբարձու ընտրուած էր։ Մէկ կողմէն եկեղեցւոյն շինութեան և միւս կողմէն առաջ Աթոռէն հետզհետէ խլուած գումարներով և այն տեղ գանուած կալուածոց վարձքերէն առաջ Աթոռոյս հինգեակ տուներըը կը նորոգէր, և նոր նոր տուներ ծախու կ'առնէր, ինչպէս նոյնը ըրած է նաեւ իւր նախորդը Ակրաիոս եպիսկոպոսը։ Իւր գործունէութիւնը և աշխատասիրութիւնը և ժողովրդապէր բարքը տեսնելով նոյն ժամանակի ապդային երեւելիները, հանգուցեալ Նաւսաւ Ֆեան Պօղոս պէկի, Աղխաղաբեան մահտեսի Ալեքսան ազգի և Խաչերեան մահտեսի Մկրտիչ ազգի յատուկ մէկ նամակաբեր (գրուեալ ի 1 յունուարի 1839) կը խրկեն Պօղոս Պատրիարքին, որ շնորհք ընէ նորա եպիսկոպոսութեան համար իւր հաճութիւնը և վկայագիրը խրկելու, այն պայմանաւ՝ որ եպիսկոպոսութիւնը ընդունելէն յետոյ կրկին Հռոմ դառնայ, "առ ի վայելել, ինչպէս կը գրեն նամակին մէջ, յերեխայութենէ պըղտղտ իւրոցն աշխատանաց, այն է օձել զեկեղեցին"։ Պօղոս Պատրիարքը եւ իւր խորհրդական սուրբ Հոգի Եգիպտոսի բարեպաշտ ժողովրդոց, մանաւանդ մեծատուն և ի-

խանաւոր Պօղոս սէկի խնդիրքը սիրով ընդունելով՝ անմիջապէս վկայագիրը կը խրկեն Պաբրիել վարդապետին, որ քիչ ժամանակէն ի Սիս երթալով յունիսի 15 երկրդ օրը ի Տէր հանգուցեալ Մինքասէլ Կաթողիկոսին կ'ընդունի Եպիսկոպոսութեան բարձր բազկի ասոմիանը, և կրկին Եպիսկոպոս տու պառնալով՝ ժողովրդեան հոգեւոր փոխոքը կը կատարէ նորոշէն եւ կեղեցին օծելով։

Ասոր ժամանակ սկսած էր Եպիսկոպոսի ազգային մէջ ուսումնասիրութեան նոր եռանդ մի արծարծիլ, կարգադրելով դպրոցանց հաստատութիւն փոյթ տանիլ և օրվհետեւ այսպիսի ձեռնարկութիւններ բաւական ոտակի կարօտ էին, ջանդելով Ս. Ընծայս սեմինարիոյն վերանորոգելը, որոնց արդիւնքը ահմանուած էր միաբանութեան սիստեմը հաստատ Եպիսկոպոս գտնուած բերքերին դնելը, վասն որոյ սկսան այն ժամանակէն յաւուրէ սեմինարիոյն ներ ըլլալ եկեղեցւոյ վախճիններ գտցընել, օրէ օր աւելցընել, և անոնցմէ եղած արդիւնքը թէ եկեղեցւոյ, թէ դպրոցանց և թէ ուրիշ ազգային հարկաւոր պիտոյից անօրինել. որոնց համար յաւուրէ աւձանագրեր ու հաշուեյատումներ հաստատուելոյն առանց խառնելու Ս. Ընծայս սեմինարիոյ արդեանց և ծախուց առանձնեալ հետ, մինչ մեր ես մինչեւ ցայսօր։ Ընդհանրին երեւելիները այն ժամանակէն սկսեալ մինչեւ ցայսօր մեծ փոյթ ու խնամք ունեցած են Եպիսկոպոսի ազգային կալուածոց արդիւնքը շահագրելու և Ս. Ընծայս օգնութեանը կարօտ չմնալու համար՝ վախճինները աւելցընել, ընտիր բարեկնամ կառավարութիւն Եպիսկոպոսի, որ ժամանակ առ ժամանակ մեկուսելու բաւական երկիրներ պարզեւած է, որոնց արդիւնքովը կրնայ ոչ միայն երկու և երեք դպրոցներ կառավարուիլ խոհական տնտեսութեամբ, և յառաջադիմութիւններ ձեռք բերել, ապա թէ ոչ՝ աւելը Ընծայս սեմինարիոյն ալ նոյն ճամբան ծախս ըլլալու ըլլայ, գտնելով քիչ է, և գտնելով մի եւ նոյն վիճակին մէջ կը մնայ ժողովուրդը։

Պաբրիել եպիսկոպոսն իւր հայրական խնամատարութեամբը բոլոր ժողովուրդին սիրելի ըլլալով՝ իւր խօսքը միշտ անոնց քով ազդեցութիւն գտած էր, և անոնց այս օրինակ ուսումնասէր և ազգասէր ճգնանքը մեծապէս ձեռնտու եղած էր։ Իր անոյշ և զիջող բնաւորութեամբը Պօղոս սէկի և ուրիշ երեւելի ազգայնոց համակրութիւնը ստանալէն ի զատ, սիրելի էր նաև տեղական կառավարութեան աչքին և շատ արտօնութիւններ և շնորհքներ անկէ վայելած։ Այսպէս իւր ծերութեան վերջին տարիները նոյն սէրն ու համակրութիւնը դատեաւ Վ. սեմինարիոյ և աշխատանքդ Եպիսկոպոսի վաշայէն, որոնց աշխարհաճանօթ ազգասիրութեան խնամքը ոչ միայն եզիպտաբնակ ժողովուրդը, այլ և դրեթէ ընդհանուր ազգը կը վայելէ. նոյն ազգասէր և ջերմեռանդ ըզգայմունքները յայս ունի և ատոր Ընծայս վայելելու Տէրն Վ. սեմինարիոյն, որուն արդէն կը նուիրէ միաբանական Աթոռս ջերմ բարեմաղթութիւններ և բազմապատիկ հաստատմունք ի Տեառնէ իւր բարեպաշտական առաջնորդութեանցը։

Կը վերջացընենք խօսքերնիս՝ խնդրելով յաւիտենական հանդիստ հոգւոյն հանգուցեալ Սրբազան Հօր, և արժանաւոր յաջորդ մի ի միաբանութիւն իւր որբացեալ սիրելի ժողովրդ-

դաց Եգիպտոսի և Աղեքսանդրիոյ։

— Ապրիլի 30 ին աշխարհահռչակ կիւրակէին սուրբ Ընծայս տօնը մեծ հանդիսաւոր պատարագ մատուցանել կենաց սուրբ Վերեզմանին վերայ, ինչպէս և Յ. Յաղկի սուրբ Խորհրդոյ կիւրակին եւս յոյնք կը պատարագեն հանդիսապէս։ Այն առթիւ Սրբազան Պատրիարքը Հայրը Յառաջնորդաց դպրոցի 10 աշակերտաց դպրութեան ասպիճան ուսուաւ սուրբ Վերեզմանին դիմաց։ Սուրբ Ընծայս տօնը ունի այսպիսի կարգեր ու ձեռնադրութիւններ սուրբ Յակոբայ մայր եկեղեցւոյ մէջ կատարելոյ. իսկ Յայնք և Յայնք իրենց մանաւանդ եկեղեցւոյ փոքրութեանը պատճառաւ տօնը միշտ սուրբ Վերեզմանին դիմացը կատարել։ Յայտնի է ապա այնպիսի արարողութիւնները որ և է սուրբ տեղւոյ մի վերայ՝ իրաւունք կը հաստատի։

— Սուրբ Յ. Յակէն ի վեր է սուրբ Ընծայս տնտէրն դեղարանը բացուելուն յանձնուեցաւ Բիթպաշեան արժանապատիւ Պ. Մահակին, որ յատուկ բժշկութեան համար բերուեցաւ Պօլսէն. և ան այժմ դեղապօծութեան ալ պիտի կատարէ մինչեւ աշակերտ մի հասցնելը, որ արդէն քաղաքացի հոյ տղայ մի արուեցաւ իրեն աշակերտութիւն։ Մխիթարեանութիւնս խիստ գոհ է յիշեալ բժշկին քաղցր բնաւորութենէն և իր կրկին արհեստին մէջ ունեցած հմտութիւններէն։

— Ճշտասէրմ քննութեան համար եկայ Թէֆթիշին վրեմ. Իպրահիմ փաշայն ամուսնացնելին մեռաւ Թեթեւ հիւանդութենէ մի յետոյ, որոյ համար կ'ըսուի թէ եկած ժամանակ եւս տկարութիւն ունէր։

ՆՈՒԻՐԱՏՈՒԿ

Սուրբ Ընծայս Թանգարանի վերաբաժնութիւնը պարտք կը համարի հրապարակաւ իւր շնորհակալութիւնը մատուցանել հետագայ բարեսէր ազգայնոց, որունք յօժարեցան իրենց քով պահուած թղթ հնութիւններ և թղթ ձեռագիր մատեաններըը Թանգարանիս նուիրելոյ, որոնց անուանքը առ ի յիշատակ յաւիտենական կ'արձանագրուին մեր օմնաթերթիս մէջ։

Վեր. Ընդրկաս Սրբազան արքեպիսկոպոսը Վ. Հայկազեան շնորհեց Ընկ. քաղաքին հնութիւններին մատագրքերս կարգ քանդակուած քարինք, ադամեալ քառակուսի ընկուզի վայրի վարպետաշէն պատուանդանի վերայ։

Թէքիրտաղը Առաջնորդ Վեր. Թադէոս սրբազան արքեպիսկոպոսը նուիրեց երկու կարգ հին նստարան ծածկ ատաղերով. առաջինը կը պարունակէ քարոզք ու ղանաղան նիւթեր։ Իսկ երկրորդը անթիւ և անհամար և ամեն տգդի նիւթերու վերայ կը խօսի (Miscellanées) այսինքն խառնատիրական, տնտեսագիտական, քերականական, բնական, բժշկական, բանասիրական, ճարտասանական, գաղանաբանական, մեկնական, հայկական իրաղերու, եւայլն եւայլն. նստարաւիծ՝ ամենամանր տատերով հած և խիտ գրուած բամբակեայ նուրբ թղթի վերայ. կը պարունակէ 1063 էջ։

Տէր Ղազարեան վիւնասյի մեծայարգ Պ. Կոստանը նուիրեց Թոմայի ագռ. ինացեայ Հոգեայ և Քրեստական բուռած գիրքը, նստարանիր մաքուր, անթուական։

Ընդհակոյ Ինքնանկար սուրբ Ընտանեցածնի եկեղեցին՝ նուիրեց նոյն եկեղեցւոյ լուսարար Պաղեան Տ. Սարգ

պիս բարեկրօն քահանայի ձեռօք՝ բա-
ղրատիր Մաշտոց մի գրեալ 1338 թիւ-
ին։

Նգեսացի մահտեսի Պղիպօր Նա-
բեկեան՝ նուիրեց մագաղաթեայ ու
բողբոջիր Մաշտոց մի 1661 ին գրը-
ուած ի Հալէպ։

Գեր. Յովհաննէս ծայրագոյն վար-
դապետեան տէր Պօղոսեան տիպրանա-
կերտցի, տեսուչ Ընդհու բարձրահայ-
եաց սուրբ Լուսաւաձածնի վանաց՝ նը-
ուիրեց երկաթագիր ու մագաղաթեայ
Աւետարան մի Փրկչի 1287 թուակա-
նին շատ յատակ գրուած։

Գեր. Պաղտասար ծայրագոյն վար-
դապետեան տիպրանակերտցի նախորդ
Հայնորդն Ընբուշի նուիրեց յիշա-
տակ՝ Երեսեի լամբրօնացւոյ մեհնու-
թիւնը Հաւակաց, Յովսէփի և Իմաս-
տասիրեան գրոց, բողբոջիր և բամ-
բակաթուղթ, 1329 ին գրուած ի Վա-
յոց ձոր, ի տէրութեան իշխանաց իշ-
խանին պարոն Պռոքիէլի, և ի վար-
ժապետութեան Նոսայեայ հռետորի
նկնցւոյ։

Տիգրանակերտու սուրբ Սարգսի
եկեղեցւոյ կոյսին Տաղարան մի բոլո-
րագիր ու բամբակաթուղթ, գրեալ
1476 թուին։

Ոսկեփորիկ մի բողբոջիր ու նօտ
բազիր նոտն, Կեսարիա գրուած
1674 ին։

ՕՐԱՆՈՒԹՄՈՒՆՔ

Ասօնց Պօղոս անհնան սպարանի
մի մէջ սպրուած գիրք մի տեսանք,
"Պատկեր Հայաստանեայց Ա. ուսու-
ցչական սուրբ եկեղեցւոյ" կոչուած,
որ ուրիշ բան չէ՝ եթէ ոչ խոստնուրդ
մի Հայոց ուղղափառ եկեղեցւոյ ծի-
սական գրոց՝ Յամագրքին, Շարակա-
նին եւայլն, յատուկ ի նոցա մէջէն
շատ մի պարբերութիւններ և ուրիշ
օտարախոտի հատուածներ աւելցնե-
լով հակառակ հոգւոյ սուրբ եկեղեց-
ւոյս. ուստի երանելիքը կրնանք կոչել
զայն բողոքականութիւն վարագու-
եալ ընդ անուամբ Ա. ուսուցչի։

Յիշեալ գիրքին Հայոց եկեղեցւոյ
ծէսերուն եւ արարողութեանց ներ-
հակ և անընդունելի ըլլալը մեր-
ցին բոլոր ապշային լրագիրներն և
հանդէսները հրատարակել՝ մէջ բերե-
լով Պօղոս Պատրիարքարանի կողմէն
խրկուած պաշտօնական ծանուցումը,
զոր հոս կը դնենք մեք ալ։

"Պաշտօնական ծանո-ում։ 1866 թուա-
կան կրոց պատկեր Հայաստանեայց
Ա. ուսուցչական սուրբ եկեղեցւոյ ա-
նունով գիրք մը հրատարակուած ոես-
նուելուս այս օրերս Տիվիճեան Թա-
դէոսի տպարանէն եղած։ Յաւ է մեզ
տեսնել, որ անոր անանուն հեղինա-
կը մեր եկեղեցական գրութիւնը, Պաշ-
տօնը, Խորհրդատետրը, Յամագրքը,
Շարականը և Տաղարանը լաւ բնոյ
ազատաղեղով, այլինքն պակսեցնելով
աւելցնելով, փոխոխելով և կրճատե-
լով իր վայ կրած անուններն բոլորովին
հակառակ Ա. ուսուցչիչ Հօր վար-
դապետութիւններէն եւ աւանդա-
թիւններէն ըստ ամենայնի օտար և
հեռու, աւելի մոլութեանց պատկեր
մը կը ներկայացնէ։

Այս գիրքը ըստ ինքեան դատա-
պարտելի ըլլալով ի պաշտօնէ պարտա-
ւորեալ կը դտնուինեմք Ա. ուսու-
ցչիչ Հօր հարազատ զաւակները, որ
անոր կեղծ և պատրուակեալ անունէն
վհատութեամբ մեծ ժէն և արհամարհեն
պայն իբրև մոլութեանց խմորում մը"։

5 Մարտ 1867

Ի Պատրիարքարանս Հայոց (կնիք)

Կ. Պոլիս։

ՕՐԱՑՈՑ
1868

ՆԱՀԱՆՁ ԹՈՒԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ

ՀՐՄԱԳԵՑԵՔ ՏՊԱԳՐԻ, ՊԱՏՐԻԱՐՔ Ս. ԵՋՄԻԱՑՈՑ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՆՍՏԵԼ ՔՐԵՊԻՍԿՈՊՈՍ